Հարկային տեղեկատվական համակարգ
www.taxinfo.am

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի N 846-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

24 դեկտեմբերի 2015 թ.
N 1510-Ն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 1-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենաներին ներկայացվող պահանջները, կիրառման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 26-ի N 1325-Ն ու 2005 թվականի հունիսի 1-ի N 946-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 846-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման N 1 հավելվածի՝

ա. 13-րդ կետի 8-րդ և 19-րդ ենթակետերը «համարը», 9-րդ ենթակետը «անվանումը», 10-րդ ենթակետը «միավորը», 14-րդ ենթակետը «հարկման», 16-րդ և 18-րդ ենթակետերը «թիվը» բառերից հետո լրացնել «(, բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների)» բառերով,

բ. 13-րդ կետի 19-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 20-րդ ենթակետով.

«20) «կանխավճար» գրառումը՝ կանխավճարների ստացման, «Նվեր» և նմանատիպ այլ քարտերի տրամադրման դեպքերում (երբ պարզ չէ, թե այդ դեպքերում ինչ ապրանքներ ձեռք կբերվեն կամ ինչ ծառայություններ կմատուցվեն):»,

գ. 13-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 13.1-ին կետով.

«13.1. ՀԴՄ-ի կտրոնի վրա ապրանքի (ծառայության) անվանումը (տեսակը) նախորդ տարվա արդյունքներով 58.35 մլն դրամ և ավելի իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների կողմից լրացվում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 875-Ն հրամանով հաստատված արտադրանքի դասակարգումն ըստ գործունեության տեսակների դասակարգչի (ԱԴԳՏ) 4-րդ աստիճանին համապատասխան՝ ըստ դասակարգչով սահմանված ապրանքների և ծառայությունների դասերի (4 նիշ), իսկ նախորդ տարվա արդյունքներով 10.0 մլն դրամից մինչև 58.35 մլն դրամ իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների կողմից՝ առնվազն 2-րդ աստիճանին համապատասխան՝ ըստ դասակարգչով սահմանված ապրանքների և ծառայությունների դասերի (2 նիշ):».

2) որոշման N 2 հավելվածի՝

ա. 10-րդ կետի վերջին նախադասությունը «հաշիվներ» բառից հետո լրացնել «(բացառությամբ հատուկ հարկային և ԱԱՀ-ի վերադարձի հաշիվների)» բառերով,

բ. 40-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ. 2016 թվականի մայիսի 1-ից՝ 2013 թվականի արդյունքներով 10.0 մլն դրամից մինչև 58.35 մլն դրամ իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար, 2014 թվականի կամ 2015 թվականի արդյունքներով 10.0 մլն դրամ և ավելի իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար,»,

գ. 40-րդ կետի 5-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «դ» պարբերությամբ.

«դ. 2017 թվականի հունվարի 1-ից՝ սույն ենթակետի «ա», «բ» և «գ» պարբերություններում չնշված հարկ վճարողների համար:»,

դ. 40-րդ կետի 5-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ ենթակետով.

«6) ՀԴՄ-ի կտրոնի վրա գնված ապրանքից կամ ստացված ծառայությունից տարբերվող ապրանքի կամ ծառայության անվանման վերաբերյալ տեղեկության ուղարկումը հարկային մարմին՝ ՀԴՄ-ի ծրագիրն արտաքին (առևտրային) ծրագրերի հետ ինտեգրած հարկ վճարողների համար:»,

ե. 41-րդ կետի 2-րդ և 2.1-ին ենթակետերի «գ» պարբերությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ. մինչև 2016 թվականի մայիսի 1-ը՝ 2013 թվականի արդյունքներով 10.0 մլն դրամից մինչև 58.35 մլն դրամ իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար, 2014 թվականի կամ 2015 թվականի արդյունքներով 10.0 մլն դրամ և ավելի իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար,»,

գ. 41-րդ կետի 2-րդ և 2.1-ին ենթակետերը լրացնել հետևյալ բովանդակությամբ` նոր «դ» պարբերություններով.

«դ. մինչև 2017 թվականի հունվարի 1-ը` սույն ենթակետի «ա», «բ» և «գ» պարբերություններում չնշված հարկ վճարողների համար:»,

է. 41-րդ կետի 2-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր` «ե» պարբերությամբ.

«ե. «կանխավճար» գրառում ունեցող ՀԴՄ կտրոնները»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության, որն ուժի մեջ է մտնում 2016 թվականի մայիսի 1-ից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ — Հ. Աբրահամյան

24 դեկտեմբերի 2015 թ.
Երևան